

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՄԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «ՏՀՏ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ»
ԱՌԱՐԿԱ՝ ԴԱՍՎԱՐ
ՀԵՂԻՆԱԿ՝ ԱՆԺԵԼԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՄԻՍԻԱՆԻ Հ. 5 ՀԻՄՆԱԿԱՆ
ԴՊՐՈՑ
ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ՍԱՀԱԿՅԱՆ

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	1
ՏՀՏ կիրառումը ` ուսուցման արդյունավետության բարձրացման բաղկացուցիչ մաս:	4
ՏՀՏ օգտագործումը տարրական դպրոցի ուսումնական գործընթացում.....	11
Եզրակացություն.....	19
Օգտագործված գրականության ցանկ.....	21

Ներածություն

Ժամանակը և տեղեկատվական տեխնոլոգիաները հոյակապ ուսուցիչներ են, սակայն, ցավոք, վերջիններս իրենց աշակերտներին սպառնում են ծերությամբ: Ժամանակը երբեք կանգ չի առնում, կյանքը մշտապես զարգանում է, մարդկային փոխհարաբերությունները, աշխարհընկալումն ու աշխարհաճանաչումն օր-օրի փոխվում են: Մարդը, տանը նստած, կարող է իմանալ ամեն ինչ՝ շնորհիվ նոր տեխնոլոգիաների: Օրեցօր ինտերնետից օգտվողների քանակը աճում է և աճում է ոչ թե մեկ անձով, այլ հարյուրավոր օգտատերեր են միանում համաշխարհային սարդոստայինին: Սարդոստայն ասվածը շատ դիպուկ է, քանզի մուտք գործողը չի կարողանում այդ տեղից ելքը գտնել: Մեր երկրում ամեն օր ավելանում են համակարգչից ու տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվողների քանակը, որը ունի իր դրական և բացասական կողմերը: Սոցիալական ցանցը համակարգ է, որն իր մեջ ներառում է բազմաթիվ գործող անձինք, ովքեր հնարավորություն են ստանում փոխհարաբերվել միմյանց հետ, և որոնց միջև ձևավորված կապերը համարվում են սոցիալական, այսինքն՝ ընկերություն, համատեղ աշխատանք կամ ինֆորմացիայի փոխանակում: Այս հետազոտության առարկան է սոցիալական ցանցերի ազդեցությունը դեռահասի անձի ձևավորման վրա: Հետազոտության օբյեկտը՝ դեռահասի անձի ձևավորման հոգեբանական ասպեկտները: Հետազոտության վարկածը ենթադրում է, որ սոցիալական ցանցերում համեմատաբար երկար ժամանակ անցկացնելու դեպքում դեռահասի համար ավելի նշանակալի են դառնում նյութական արժեքները, որոնք սխալ հետևանքների են բերում հոգեբանական զարգացման տեսանկյունից: Նորագույն տեխնոլոգիաները մարդկային կյանքի, ողջ աշխարհի համար ստեղծել են նոր աշխարհ: Ներկա դարաշրջանում մարդը մուտք է գործել տեխնոլոգիաների նոր դարաշրջան, որն արագ տեմպերով փոփոխության է ենթարկել նրա հասարակական կյանքը: Ժամանակակից կրթական պահանջները թելադրում են վերանայել կրթության սովորական ձևերն ու բովանդակությունը: Յուրաքանչյուր ուսումնական հաստատությունից, ուսուցչից պահանջվում է կատարել հատուկ գործողություններ, որոնք կձևավորեն կարողունակություններ և գիտելիքներ՝ ապագայում գործնական խնդիրների լուծման համար: Մինչ այսօր մանկավարժական բնագավառում չկա

մեդիայի կիրառելիության համագործակցություն, ուսումնասիրված չէ՝ ինչ դեր են խաղում տեղեկատվական տեխնոլոգիաները կրթության և դաստիարակության խնդրում: Այստեղ գլխավոր բարդությունն այն է, որ կատարված ուսումնասիրությունները կորցնում են արդիականությունը՝ մեդիամիջոցների արագ փոփոխման հետևանքով: Կրտսեր տարիքի երեխաները շատ հետաքրքրասեր են: Ձգտում են ավելի շատ բան իմանալ մարդկանց, աշխարհի մասին:

Հետազոտության արդիականությունը: Հետազոտության այս թեման պատահականորեն չեմ ընտրել: Ընտրել եմ այնպիսի թեմա, որն, առնվազն, իմ աշխատանքային գործունեության ընթացքում դարձել է հիմնախնդիր և ուզում եմ ներկայացնել նաև տարրական դասարաններում դրա կիրառման սեփական փորձ, առաջարկել լուծման ուղիներ, խաղային հնարներ: Կարծում եմ՝ այն արդիական է բոլորիս համար: Աշխատանքային փորձս ցույց է տվել, որ տարրական դասարաններում ուսուցանվող առարկաների ուսումնասիրման ընթացքում գրեթե բոլոր սովորողների մոտ էլ առաջանում են դժվարություններ, քանի որ հարկավոր է լինում մտապահել կարճ ժամանակահատվածում տրվող մեծ քանակությամբ տեղեկատվություն:

Հետազոտության նպատակը: Ցույց տալ, որ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը դասապրոցեսում բարձրացնում է սովորողների մոտիվացիան և դրանց կիրառումը ուսումնառության գործընթացը դարձնում է հետաքրքիր, համագործակցային, չհոգնեցնող, ինչպես նաև՝ արագ ու արդյունավետ:

Վերոգրյալի համաձայն սահմանվում են **հետազոտության հետևյալ խնդիրները.**

- գտնել, ուսումնասիրել այս թեմայի շուրջ եղած գիտական գրականությունը, էլեկտրոնային ռեսուրսներն ու առցանց խաղերը,
- ընտրել, մշակել, համակարգել տարրական դասարաններում կիրառելի ՏՀՏ ռեսուրսները և փորձառությամբ հիմնավորել դրանց արդյունավետությունը:
- Առաջարկված խնդիրների լուծման նպատակով օգտագործվել են հետազոտման հետևյալ մեթոդները.
- համացանցի ու գիտամեթոդական գրականության ուսումնասիրում և տեսական ու գործնական վերլուծություն,

- դասավանդման միջոցով տարրական դասարանների ուսուցիչների աշխատանքի փորձի ուսումնասիրում և վերլուծում,
- մանկավարժական հետազոտման մեթոդներ՝ դիտում, հարցում, անկետավորում,
- էլեկտրոնային թեստեր, քարտեր, տնային հանձնարարություններ, ինքնուրույն և խմբային աշխատանքներ,
- դիդակտիկ խաղեր:

ՏՀՏ կիրառումը՝ ուսուցման արդյունավետության բարձրացման
բաղկացուցիչ մաս:

«Առանց նորին ձգտելու, չկա կյանք,
չկա զարգացում, չկա առաջընթաց»
Վ.Գ. Բելինսկի

Սա մենք՝ ուսուցիչներս, դասարան մտնելիս պետք է քաջ գիտակցենք:
Հանրակրթության նպատակը ոչ միայն գիտելիք փոխանցելն, այլև գիտակից քաղաքացի
ձևավորելն է, ով կկարողանա կողմնորոշվել ժամանակակից աշխարհում: Զարգացած
երկրները վաղուց են համոզվել, որ առանց կրթության մեջ հաղորդակցական
տեխնոլոգիաների կիրառության այսօր գրեթե անհնար է հասնել այդ նպատակներին:
Աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները մարդկանց ստիպում են անընդհատ
յուրացնել նոր գտելիքներ և հմտություններ, պատրաստ լինել շարունակական ուսման:
Մանկավարժական տեսանկյունից քննարկվում են հետևյալ խնդիրները.

- կրթական որակի ապահովում.
- տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները լրացուցիչ կրթության մեջ.
- նոր տեղեկատվական տեխնոլոգիաները՝ որպես ստեղծական կարողությունների և
մասնագիտական կողմնորոշման միջոց.

- կրթության հոգեբանական, մանկավարժական խնդիրները տեղեկատվական հասարակության պայմաններում.
- տեղեկատվական տեխնոլոգիաների դաստիարակչական ազդեցությունը.
- տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը անհատի մտավոր զարգացման վրա
- տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը երեխաների հոգեբանական զարգացման վրա: Արդեն բոլորն են եկել այն համոզմունքին, որ ժամանակները փոխել են ամեն ինչ և իրենց հետքն են թողել մանկության և պատանեկության վրա: Մանկությունն ու պատանեկությունը մեր կյանքի կարևոր փուլերն են, որոնք մեզանից յուրաքանչյուրն ուրախությամբ է հիշում: Նախկին բակային և մանկական խաղերին փոխարինելու են եկել հեռուստացույցը, համակարգիչը, բջջային հեռախոսը, պլանշետը, համացանցը... Հետաքրքրությունները փոխվել են: Ցավոք այս փոփոխություններն ոչ միշտ են դեպի դրականը: Հիմա երեխաները նախընտրում են համակարգչային խաղերը, սոցիալական կայքերով շփումները: Այժմ երեխաների մեծ մասը իր մանկությունն անցկացնում է համակարգիչների, հեռախոսների և հեռուստացույցի առաջ: Այս դարաշրջանի երեխաներին համարում են թվային սերունդ: Նրանք ծնվում են տեղեկատվությամբ ծանրաբեռնված միջավայրում: Դրա համար հաճախ հանդիպում ենք ուշադրության կենտրոնացման դժվարություններ աշակերտների մոտ: Յուրաքանչյուր ուսուցչի դերը կայանում է նրանում, որ օգնի աշակերտին այս տեղեկատվական մեծ աշխարհում գտնի իրեն անհրաժեշտը, հետաքրքրություն արթնացնի կրթական գործունեության նկատմամբ, հասնի աշակերտների ակտիվության դրսևորմանն ուսման մեջ: SՀS-ների արդյունքների մասին ոչ միանշանակ է խոսում Փաքլերը իր «Թվային տեխնոլոգիաներով ուսումնառության վերաբերյալ տեսակետներ և տեսություններ» հոդվածում: Այստեղ նա նշում է, որ տեխնոլոգիաներով համալրված ուսումնառության պատմությունը լի է չիրագործված, անիրատեսական խոստումներով և տեխնոլոգիաների ֆետիշացմամբ: Սակայն թվային տեխնոլոգիաներով դասի անկացման արդյունավետության նվազեցման պատճառների մեջ հեղինակը արդարացիորեն նշում է նաև խանգարող մի քանի պատճառներ՝ թվային

տեխնոլոգիաները կիրառելու վստահության աստիճանը, սարքակազմի մատչելիությունը, ինչպես նաև մանկավարժական հիմնախնդիրների ուղղությամբ մասնագիտական զարգացման հասանելիության բացակայությունը: Փաստարկված բացասական կարծիքների կողքին Փաթիլերը անդրադառնում է նաև ՏՀՏների կիրառման արդյունավետության նկատմամբ դրական կարծիք ունեցող տեսաբաններին՝ փաստելով, որ դրանց կիրառումը մշտապես պետք է վերահսկվի ուսուցչի կողմից: Տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ դրական դիրքորոշում ունի Ջանել Կոքսը, ով տեխնոլոգիաների կիրառումը դասարանում կարևորում է, գտնելով, որ միայն ժամանակակից տեխնոլոգիաներին տիրապետելով՝ աշակերտը կարող է ներգրավվել այժմյան աշխատաշուկա և այնտեղ իր տեղը գտնել: 21-րդ դարին համընթաց տեխնոլոգիաները դասարանում ավելի ու ավելի գերակշռող են դառնում: Պլանշետները փոխարինում են մեր դասագրքերին, և մենք սմարթֆոններով կարող ենք ուսումնասիրել այն ամենը, ինչ ուզում ենք: Սոցիալական մեդիան դարձել է մեր կյանքի բաղկացուցիչ մասը և տեխնոլոգիաները ամբողջությամբ փոխել են մեր ապրելակերպը ու կյանքը: Սակայն դասարանում տեխնոլոգիաների կիրառման հնարավոր արդյունքների վերաբերյալ թե՛ ուսուցիչների և թե՛ տեսաբանների կարծիքները բավականին հակասական ու տարբեր են: Տեխնոլոգիաներ կիրառելու կամ չկիրառելու մասին մտածելիս պետք է հաշվի առնել այն օգուտները, որոնց հանգեցնում է տեխնոլոգիաների կիրառումը.

- դա աշակերտներին դրդում է ավելի ակտիվ լինել,
- ստեղծում է վստահություն,
- ընդլայնում է փոխհարաբերությունները,
- զարգացնում է աշակերտների մոտ արագ գործելու կարողությունը:

Ե՞րբ է դասը տպավորիչ: Դասը տպավորիչ է, երբ դիդակտիկան տեղին է ու հետաքրքիր: Առաջընթացը ստուգելու համար լավ է կիրառել նաև համաշխարհային առցանց հարուստ էլեկտրոնային ռեսուրսներն ու տեխնոլոգիաները: Մի կողմ դնելով թուղթն ու գրիչները՝ պետք է փնտրել ժամանակակից վիկտորինաներ ու խաղեր, որոնք երեխային կթվան ո՛չ այնքան ձանձրալի, միապաղաղ ու հոգնեցուցիչ թեստեր կամ այլ գրավոր աշխատանքներ, որքան՝ խաղ:

Էլեկտրոնային առցանց խաղեր: Ժամանակակից դպրոցականներին շատ է դուր գալիս որևէ բան սովորել գաջեթի էկրանին նայելով: Բացի այդ, սա հնարավորություն է տալիս երեխային սովորելու ցանկացած պահի, ցանկացած վայրում գտնվելիս.

արձակուրդների ընթացքում, տրանսպորտում և այլն:

Ամենայն հավանականությամբ նման վարժությունները սովորողը կընկալի որպես խաղ, այլ ոչ թե ձանձրալի ու պարտադրված հանձնարարություն, իսկ որպես բոնուս՝ այն նաև հետաքրքիր է երեխային: Իսկ այդպիսի հավելվածներն ու ռեսուրսները ժամանակակից տեխնոլոգիական աշխարհում քիչ չեն, որոնցից շատերում երեխաներին առաջարկվում է լուծել օրինակները, տեղավորվելով ժամանակի մեջ, հավաքել բալեր կամ նվերներ: Ազարտը, ինչպես հայտնի է, գերազանց խթան է:

Մեդիադասերը օգնում են լուծել հետևյալ դիդակտիկ խնդիրները.

- յուրացնել թեմայի վերաբերյալ հիմնական գիտելիքները
- համակարգել ձեռք բերած գիտելիքները
- ձևավորել ինքնակառավարման հմտություններ
- ամբողջությամբ ձևավորել սովորելու շարժառիթ
- ուսումնամեթոդական օգնություն ցուցաբերել սովորողներին՝ ուսումնական նյութի ստեղծման ինքնուրույն աշխատանքում:

Այս տեխնոլոգիան կարելի է դիտել որպես ուսուցման բացատրական-գննական մեթոդ, որի հիմնական նպատակը ուսումնական նյութի հաղորդման ճանապարհով սովորողների՝ տեղեկատվության յուրացման կազմակերպումն է և դրա հաջող ընկալման ապահովումը, որը ընդլայնվում է, երբ զուգահեռ միանում է նաև տեսողական հիշողությունը:

Հայտնի է, որ մարդկանց մեծամասնությունը մտապահում է լսածի 5% և տեսածի 20%-ը: Ձայնային և տեսողական տեղեկատվության միաժամանակյա օգտագործումը բարձրացնում է մտապահելու ունակությունը մինչև 40-50 %: Մեդիաձրագրերը ինֆորմացիան մատուցում են զանազան ձևերով և հենց դրանով ուսումնական պրոցեսն ավելի արդյունավետ են դարձնում:

Ժամանակի խնայողությունը անհրաժեշտ նյութի ուսումնասիրման համար միջինում կազմում է 30%, իսկ ձեռք բերած գիտելիքները պահպանվում են հիշողության մեջ ավելի երկար: Կրտսեր դպրոցում մեդիատեխնոլոգիաների օգտագործումը դասի ընթացքում սկզբունքորեն չի փոխում դասի կառուցվածքը: Նրա մեջ նախկինի պես պահպանվում են բոլոր հիմնական փուլերը, փոխվում են միայն դրանց ժամանակավոր բնութագրերը:

Մեդիաներկայացման /պրեզենտացիա/ կառուցվածքային դասավորությունը զարգացնում է համակարգված, վերլուծական մտածողությունը: Բացի դրանից, պրեզենտացիայի օգնությամբ կարելի է օգտագործել ճանաչողական գործունեության կազմակերպման զանազան ձևեր՝ ֆրոնտալ, խմբային և անհատական:

Մուլտիմեդիա շնորհանդեսը, այդպիսով, ավելի օպտիմալ և արդյունավետ է համապատասխանում դասի երեք միասնական դիդակտիկ նպատակներին.

-կրթական առումով՝ սովորողների կողմից ուսումնական նյութի ընկալումը, ուսումնասիրության օբյեկտների կապերի և հարաբերությունների ըմբռնումը

-զարգացման առումով՝ սովորողների ճանաչողական հետաքրքրությունների զարգացումը, ընդհանրացնելու, վերլուծելու, համեմատելու հմտությունները, սովորողների ստեղծագործական գործունեության ինտենսիվացումը

-դաստիարակչական առումով՝ գիտական աշխարհայացքի ձևավորում, ինքնուրույն և խմբային աշխատանքների հստակ կազմակերպման հմտություններ, ընկերության, փոխադարձ օգնության զգացումների դաստիարակում

Մեդիատեխնոլոգիաները կարող են օգտագործվել՝

1. Թեմայի նշման համար

- դասի թեման ներկայացված է սլայդների միջոցով, որտեղ համառոտ շարադրված են ուսումնասիրվող հարցի հիմնական կետերը:

2. Որպես ուսուցչի բացատրությունների ուղեկից

- կարող են օգտագործվել կոնկրետ դասերի համար ստեղծված մեդիա կոնսպեկտ-շնորհանդեսներ, ստեղծելով համառոտ տեքստ, հիմնական բանաձևեր, գծագրեր, նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ:

3. Որպես տեղեկատու-ուսուցողական ձեռնարկ

- ուսուցման մեջ այսօր հատուկ շեշտադրում է դրվում սովորողի ինքնուրույն գործունեության վրա: Ուսուցիչն այս դեպքում հանդես է գալիս որպես ուսուցման պրոցեսի կազմակերպիչ, սովորողների ինքնուրույն գործունեության ղեկավար, ով անհրաժեշտ օգնություն և աջակցություն է ցույց տալիս:

4. գիտելիքների ստուգման համար

- համակարգչային թեստավորման օգտագործումը բարձրացնում է ուսումնական պրոցեսի արդյունավետությունը, ակտիվացնում է դպրոցականների ճանաչողական գործունեությունը: Թեստերը կարող են լինել հարցաշարերի տարբերակով, որոնց պատասխանները սովորողը գրառում է տեսքում կամ հատուկ բլանկի վրա:

Կարելի է տարբերակել այս տեխնոլոգիայի հետևյալ առանձնահատկությունները.

1. Կավիճով գրված պատկերի որակը չի կարող համեմատվել էկրանի վրայի կոկիկ, պայծառ, հստակ և գունավոր պատկերի հետ

2. գրատախտակի և կավճի օգնությամբ դժվար է և անհարմար տարբեր գործիքների օգնությամբ բացատրել աշխատանքը

3. շնորհանդեսի ներկայացման ժամանակ, նույնիսկ պրոյեկտորի օգտագործման դեպքում, սովորողի աշխատանքային տարածքը բավականին լավ լուսավորված է

4. տեսանելի մակարդակի բարձրացում դասի ժամանակ

5. դասի արդյունավետության բարձրացում

6. միջառարկայական կապերի հաստատում

7. Ստեղծող և ՏՀՏ օգտագործող դասավանդողը ստիպված է մեծ ուշադրություն հատկացնել ուսումնական նյութի մատուցման տրամաբանությանը, որը դրական է անդրադառնում սովորողների գիտելիքների մակարդակի վրա:

8. փոխվում է վերաբերմունքը ԱՀ-ի (անհատական համակարգիչ) նկատմամբ: Երեխաները սկսում են ընկալել այն որպես ունիվերսալ գործիք մարդկային գործունեության ցանկացած բնագավառի աշխատանքի համար, այլ ոչ թե որպես գործիք՝ խաղալու համար:

Կրտսեր դպրոցում ուսումնական պրոցեսի կազմակերպման փորձը ՏՀՏ-ների օգտագործմամբ նկարագրված մոդելով թույլ է տալիս խոսել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և ուսուցման այլ միջոցների համադրման արդյունավետության բարձր մակարդակի մասին, որը ենթադրում է իմացություն գործունեության միջոցով: Այն սովորողների ուսուցման կազմակերպական ձևերի, բովանդակության, մեթոդների փոփոխման երկար և շարունակական պրոցես է, ա՛յն սովորողների, ովքեր ապրելու և աշխատելու են անսահմանափակ ինֆորմացիայի մուտքի պայմաններում:

Այսպիսով, մեդիատեխնոլոգիաները հարստացնում են ուսուցման պրոցեսը, թույլ են տալիս ուսուցումը դարձնել ավելի արդյունավետ, նաև նպաստում են սովորողի ստեղծագործական զարգացմանը:

Շնորհանդեսը հնարավորություն է տալիս ուսուցչին՝

- պատկերավոր ներկայացնել
- ամրապնդել նոր նյութի հաղորդման ընթացքը

- կարգավորել ներկայացվող տեղեկատվության ծավալն ու արագությունը անհիմացիայի շնորհիվ
- մեծացնել սովորողների ճանաչողական ակտիվությունը:

Շնորհանդեսը հնարավորություն է տալիս սովորողներին՝

- պատկերավոր ներկայացնել ուսումնական նյութը /նշել է սովորողների 75%-ը/
- դարձնել դասը առավել հետաքրքիր /նշել է սովորողների 63%-ը/
- նոր նյութի հաղորդման պրոցեսի ինտենսիվացումը / նշել է սովորողների 35%-ը/:

ՏՀՏ օգտագործումը տարրական դպրոցի ուսումնական գործընթացում.

Մարդուն տեղեկատվական աշխարհում ապրել սովորեցնելը ժամանակակից դպրոցի ամենակարևոր խնդիրն է: Նոր գիտելիքների անհրաժեշտությունը, տեղեկատվական գրագիտությունը, գիտելիք ինքնուրույն ձեռք բերելու կարողությունը նպաստեցին կրթության նոր տեսակի առաջացմանը՝ նորարարական, որում տեղեկատվական տեխնոլոգիաները կոչված են խաղալու ողնաշար, ինտեգրող դեր:

Ժամանակակից հաղորդակցական տեխնոլոգիական միջոցները դասավանդողի ու սովորողի հարաբերությունները դարձնում են օպերատիվ, արդյունավետ ու մատչելի: Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ էլեկտրոնային ուսուցման համակարգերը, որոնք կառուցված են մուլտիմեդիական տեխնոլոգիաների հիման վրա, ներկայումս ուսուցման առավել արդյունավետ միջոցներից են:

Համակարգչային գրաֆիկայի, անհիմացիայի, կենդանի տեսապատկերման, ձայնի համակցված օգտագործումը եզակի հնարավորություն է ընձեռում ուսումնասիրվող նյութն առավելագույնս ընկալելու դիտողական տեսքով, ավելի հասկանալի ու հիշելի: Դա հատկապես կարևոր է այն դեպքում, երբ սովորողը պետք է յուրացնի մեծ ծավալի տեղեկատվություն:

Իսկ ինչպե՞ս կարող է տեխնոլոգիան բարձրացնել ուսման որակը: Տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը որակապես փոխում է

դասավանդողի դերը, և նա դառնում է սովորողի կրթական գործը կազմակերպող, նրան աջակցող ու գնահատող գործընկեր: Տարրական դասարաններում տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաները կիրառում են ուսումնական նյութն ավելի գրավիչ և հասկանալի ներկայացնելու համար: Ուստի ելնելով ժամանակակից դպրոցի պահանջներից՝ անհրաժեշտ է ավելացնել համակարգչի օգտագործմամբ ուսուցանումը: Օգտագործելով համակարգչի երկխոսական, մոդելավորման, գունային և բացառիկ այլ հնարավորությունները՝ դասը կարելի է դարձնել ավելի մասշտաբային, ընկալելի, դիտողական և նույնիսկ «հրավիրող»: Համակարգիչը կարող է օգնել դասավանդողին ուսուցման գործընթացը բովանդակալից ու հետաքրքիր անցկացնելու համար:

Տարրական դպրոցում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը միջոց է դպրոցականների ճանաչողական հետաքրքրությունը բարձրացնելու ուսումնական գործունեության նկատմամբ: Տեղեկատվական տեխնոլոգիան մեթոդների, արտադրական գործընթացների և ծրագրային ու ապարատային գործիքների մի շարք է՝ համակցված տեխնոլոգիական շղթայում, որն ապահովում է տեղեկատվության հավաքագրում, մշակում, պահպանում, բաշխում և ցուցադրում՝ տեղեկատվական ռեսուրսի օգտագործման գործընթացների բարդությունը նվազեցնելու համար. ինչպես նաև բարձրացնել դրանց հուսալիությունը և արդյունավետությունը:

Տեղեկատվական տեխնոլոգիաները կարելի է բաժանել երկու տեսակի.

- Ավանդական տեղեկատվական տեխնոլոգիաներ (հիմնված գրքերի և գրահրատարակչական այլ ապրանքների օգտագործման վրա):
- Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ (հիմք ընդունելով համակարգչի օգտագործումը):

Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը թույլ է տալիս.

1. Ուսուցման բացատրական-պատկերազարդ եղանակից անցնել գործունեության վրա հիմնված ձևի, որտեղ երեխան դառնում է ուսումնական գործունեության ակտիվ սուբյեկտ: Մա նպաստում է սովորողների կողմից գիտելիքների գիտակցված յուրացմանը:
2. Ակտիվացնել ուսանողների ճանաչողական գործունեությունը:

3. Դասերն անցկացնել բարձր գեղագիտական և զգացմունքային մակարդակով:
4. Մեծացնել դասում կատարված աշխատանքի ծավալը:
5. Բարելավել գիտելիքների վերահսկումը:
6. Ռացիոնալ կազմակերպել ուսումնական գործընթացը, բարձրացնել դասի արդյունավետությունը:
7. Ձևավորել հետազոտական հմտություններ:
8. Ապահովել մուտք դեպի տարբեր տեղեկատու համակարգեր, էլեկտրոնային գրադարաններ, այլ տեղեկատվական ռեսուրսներ: Կրտսեր դպրոցում կրթության և դաստիարակության արդյունքներից մեկը պետք է լինի ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաներին տիրապետելու երեխաների պատրաստակամությունը և նրանց օգնությամբ ստացված տեղեկատվությունը հետագա ինքնակրթության համար օգտագործելու կարողությունը:
Համակարգիչը ակտիվացնում է սովորողների ուշադրությունը, ուժեղացնում նրանց մոտիվացիան, զարգացնում է ճանաչողական գործընթացները, մտածողությունը, ուշադրությունը, զարգացնում է երևակայությունը: Տարրական դպրոցում դասերի համար ուսումնական նյութի պատրաստման և ներկայացման ամենահաջող ձևերից մեկը կարելի է անվանել մուլտիմեդիա շնորհանդեսների ստեղծումը, որոնք համակարգչային ծրագրերի միջոցով տեղեկատվության ներկայացման հարմար և արդյունավետ միջոց են: Այն համատեղում է դինամիկան, ձայնը և պատկերը, այսինքն. այն գործոնները, որոնք ամենաերկար ժամանակով են գրավում երեխայի ուշադրությունը: Ընկալման երկու կարևոր օրգանների (լսողության և տեսողության) վրա միաժամանակ ազդելը կարող է մեծացնել ուսումնառության արդյունքները: Այն կարելի է օգտագործել դասի բոլոր փուլերում. և՛ գիտելիքի վերհանման, և՛ նոր նյութ բացատրելու, և՛ համախմբման ժամանակ: Համակարգչի հարուստ գրաֆիկական, ձայնային և ինտերակտիվ հնարավորությունների օգտագործումը դասասենյակում ստեղծում է բարենպաստ հուզական ֆոն՝ նպաստելով աշակերտի զարգացմանը, ասես նրա կողմից աննկատ, առանց ջանքերի:

Ինչպե՞ս են համակցվում ՏՀ տեխնոլոգիաները և ուսուցման-ուսումնառության նոր մոտեցումները: Կրթության համակարգ ինտեգրվող տեղեկատվական և հեռահաղորդակցական նոր տեխնոլոգիաները պետք է համապատասխանեցվեն մանկավարժության, հոգեբանության և այլ գիտությունների գլխավոր՝ մարդաբանական, անձնակենտրոն ուղղվածությանը: Այսինքն՝ ուշադրության կենտրոնում պետք է լինեն սովորողի անձը և նրա ուսումնառությունը:

ՏՀՏ գործիքների կիրառման ժամանակ ուսումնական գործընթացի օպտիմալացման ուղիների գործնական իրականացման հնարավորությունները.

- կրթական և զարգացման խնդիրների համապարփակ լուծում,
- յուրաքանչյուր աշակերտի կոնկրետ առաջադրանքների առաջադրում՝ կախված նրա կարողություններից, մոտիվացիայից, պատրաստվածության մակարդակից,
- կրթական նպատակներով տարբեր տեսակի էլեկտրոնային միջոցների
- օգտագործումը, ակտիվացնելով կրթական գործունեությունը,
- ուսուցչի մասնակի ազատում՝ տեղեկատվություն փոխանցողի, սովորեցնողի, վերահսկողի գործառույթներից,
- ուսանողների գիտելիքների ինքնատիրապետման հմտությունների ձևավորում, □ համացանցում տեղեկատվություն փնտրելու, հավաքելու և մշակելու հմտությունների զարգացում,
- ուսուցման դրական մոտիվացիայի խթանում, տեսանելիության բոլոր ձևերի ինտեգրման, կրթական գործունեության իրականացման անմիջական հետադարձ կապի և զարգացած օգնության համակարգի միջոցով: Օգտվում եմ պատրաստի էլեկտրոնային ռեսուրսներից, կազմում առանձին թեմաներով թեստային առաջադրանքներ, կարճ ասած՝ սովորեցնում երեխաներին օգտագործել ՏՀՏ-ն՝ սովորել սովորելու համար:Եվ կարող եմ սեփական փորձառությամբ փաստել, որ էլեկտրոնային ուսուցման միջոցների օգտագործումը թույլ է տալիս բարելավել ուսուցման որակը, դարձնել այն դինամիկ, լուծել մի քանի խնդիրներ՝ տեսանելիություն, մատչելիություն, անհատականություն, վերահսկողություն,

անկախություն:Դասերի ընթացքում ավելի մեծ արդյունավետության համար կարելի է կիրառել առարկայական հավաքածուներ, դիմանկարներ, տեսաշրջագայություններ, ինտերակտիվ մոդելներ, լուսանկարներ, առարկաների նկարագրություններ (հիմնականում դրանք հանրագիտարաններ են, որոնք շատ օգտակար են դասին պատրաստվելու համար): Նոր նյութ բացատրելիս մեկնաբանվում է էկրանին հայտնված տեղեկատվությունը, անհրաժեշտության դեպքում այն ուղեկցում լրացուցիչ բացատրություններով ու օրինակներով: Համակարգչի շնորհիվ ավելի կարճ ժամանակում հնարավոր է լուծել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են բառապաշարի համալրումը, քերականական կառուցվածքի ձևավորումը, խոսքի ձայնային կողմի զարգացման մեջ բացերի լրացումը, համահունչ խոսքի ձևավորումը, ուղղագրության զարգացումը, զգոնությունը, որը նպաստում է գրագիտությանը: Սովորողների մոտ մեծանում է հետաքրքրությունը ուսումնական գործընթացի նկատմամբ, զարգացնում է ինքնատիրապետման և ինքնուրույն գործունեության հմտությունը:Էլեկտրոնային հանրագիտարանի անիմացիոն կամ վիդեո պատմությունը ոչ միայն ընդլայնում է ներկայացված տեղեկատվության շրջանակը, այլև ակտիվացնում է դպրոցականների ուշադրությունը տեսողական և լսողական վերլուծիչների ակտիվ աշխատանքի շնորհիվ:Համակարգիչը ձևավորում է նյութը ռացիոնալ մտապահելու հմտություններ:Սովորողների համար դժվար նյութը ավելի հեշտ է հիշել գծապատկերների և աղյուսակների օգնությամբ, որոնք հակիրճ և հստակ ցույց են տալիս ուսումնասիրվող նյութը: Ժամանակակից տեխնոլոգիաների և դասավանդման օպտիմալ մեթոդների շնորհիվ ուսուցիչը յուրաքանչյուր երեխայի հնարավորություն է տալիս «ճամփորդել» գիտելիքի աշխարհով, կարծես թե նա ճանապարհորդում է ինչ-որ զվարճալի խաղի խաղային տեսարաններով, ինչը նոր հզոր խթան է հաղորդում ինքնուրույնության զարգացմանը:

Կրթական գործընթացում համակարգիչը կարելի է օգտագործել ` որպես ուսումնական նյութի յուրացման նկատմամբ հսկողություն կազմակերպելու, սովորողների հաջողության ակնթարթային գնահատման և դասի ընթացքում սովորողների ունեցած դժվարությունների մասին տեղեկատվություն ստանալու միջոց: Դպրոցականների

տեղեկատվական կարողունակությունն անհրաժեշտ է բոլոր ուսումնական առարկաների որակական զարգացման համար:

Ի դեպ, համակարգչային տեխնիկան հնարավոր է օգտագործել ոչ միայն դասարանում: Զորօրինակ՝ «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասանյութերի զգալի մասը նվիրված է բնապահպանական կրթությանը: Առարկայի թեմաները սովորողներին դրդում է համացանցի օգնությամբ ինքնուրույն ուսումնասիրել ծրագրով առաջադրված խնդիրները, կատարել առարկայի անձնական ընտրություն, նյութ պատրաստել և դասավորել, իսկ դասի ժամանակ՝ բանավոր կամ գրավոր եղանակով ներկայացնել դասընկերներին և ուսուցչին:

Երեխաներին առաջին հերթին գրավում է համակարգչով աշխատելու գործընթացը. հարց է տալիս ոչ թե դասագիրքը, այլ ինքը՝ սովորողը, ճշգրիտ ձևակերպելով խնդրանքը, սարքին խնդրում է տրամադրել անհրաժեշտ տեղեկատվությունը, այսինքն, կա՝ երեխայի միջնորդավորված հաղորդակցություն համացանցի հետ: Այսպես սովորողը հասկանում է իր կարևորությունը՝ որպես նախաձեռնող, կազմակերպիչ, գրաքննիչ, մի խոսքով այս հաղորդակցության ակտիվ կողմ: Երեխան զգում է իր կարևորությունն ու պատասխանատվությունը, ինչը չի կարող դրականորեն չազդել նրա ինքնագնահատականի վրա:

Միևնույն ժամանակ, ինչպես ցույց է տալիս դասավանդման փորձը, համակարգչային տեսաֆիլմեր դիտելիս սովորողների մոտ ավելանում է «ինչու»-ների քանակը, ինչն էլ ստիպում է նրանց համացանցում ինքնուրույն փնտրելու և գտնելու իրենց հուզող հարցերի պատասխանները: Տարրական դպրոցում անհնար է դաս անցկացնել առանց զննական միջոցների ներգրավման: Այս առիթով, որպես ուսուցիչ, հաճախ խնդիրներ են առաջանում. որտեղ կարող եմ գտնել ինձ անհրաժեշտ նյութը և ինչպես լավագույնս ցուցադրել այն: Օգնության է հասնում համակարգիչը: Գործնականում կրթության տեղեկատվական տեխնոլոգիաներ կոչվում են այն բոլոր տեխնոլոգիաները, որոնք օգտագործում են հատուկ տեխնիկական տեղեկատվական գործիքներ

(համակարգիչներ, աուդիո, կինո, վիդեո): Տեղեկատվական մշակույթի ձևավորումը դպրոցում տեղի է ունենում հիմնականում ՏՀՏ-ի օգնությամբ և միջոցներով, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, ժամանակակից դպրոցն առանց տեղեկատվական նոր տեխնոլոգիաների արդեն անհնար է պատկերացնել: Ակնհայտ է, որ առաջիկա

տասնամյակներում կմեծանա անհատական համակարգիչների դերը և, ըստ այդմ, կբարձրանան տարրական դասարանների աշակերտների համակարգչային գրագիտության նկատմամբ պահանջները:

SՀS-ի օգտագործումը դասարանում ուժեղացնում է.

- հավասարության սկզբունքը
- վստահության սկզբունքը
- հետադարձ կապի սկզբունքը
- հետազոտողի պաշտոն ստանձնելու սկզբունքը.

Մեր կողմից կատարված դիտարկումները ցույց տվեցին, որ կրտսեր դպրոցականի ուսուցման գործնթացում առավելագույն դիդակտիկ արդյունքի կարելի է հասնել միայն ժամանակակից SՀS-ի համակարգված օգտագործման պայմաններում: Համակարգչային տեխնոլոգիաները, կրթական պաշարները, էլեկտրոնային ուսուցումը և տեղեկատվական կայքերն արդյունավետ չեն լինի, եթե նրանց կիրառումը կրի անջատ և ոչ նպատակամղված բնույթ: Անդրադառնալով կրտսեր դպրոցում դասավանդման արդյունավետության բարձրացման հիմնախնդրին՝ նշենք, որ առկա են SՀS-ների օգտագործման բազմաթիվ հնարավորություններ, որոնք մեծապես նպաստում են սովորողների կողմից տեղեկատվության հեշտ յուրացմանը: Ուստի հաշվի առնելով տվյալ տարիքային խմբին հատուկ դիդակտիկական նպատակներն ու յուրահասակությունները՝ նաև սեփական դիտարկումների հիման վրա կուզեի առանձնացնել համակարգչային ծրագրերի հետևյալ տեսակները՝ վարժանքային, ցուցադրական, ուսուցողական, տեղեկատվական, մոդելավորման և մուլտիմեդիա ծրագրեր: Որպես կրտսեր դպրոցում կիրառելի գործիքներ(կիրառելի են և՛ հեռավար դասերի, և՛ առկայի դեպքում), իսկ դրանք հարյուրավոր են, կուզեի առանցնացնել հետևյալները.

- **Google Slides**-ն էլեկտրոնային ցուցադրության ընտիր գործիք է, որով կարելի է ստեղծել ու ներկայացնել ազդեցիկ շնորհանդեսներ:
- **Իմ Դպրոց** կրթական կայքն օգնում է սովորողներին լրացուցիչ առաջադրանքների օգնությամբ ամրապնդել դպրոցական գիտելիքներն ու զարգացնել կարողությունները:

- **Google Forms** գործիքի միջոցով իրականացվում է միավորային գնահատում (տեսական և գործնական):
- **Google Classroom**-ը ուսուցողական հավաքածու է դպրոցների համար, որոնք կարող են ավելացվել Google Apps-ի կրթական ծրագրերից օգտվողների համար: Google-ը տրամադրում է Google Apps-ի անվճար խմբագրությունը ուսումնական հաստատությունների համար, եւ Google Classroom-ն այն տեղադրումն է, որը տեղադրում է Google-ի ծրագրերը սովորողներին և ուսուցիչներին հաղորդակցման հավաքակազմ դարձնելու միջոցով: Այն շատ արդյունավետ կձառայի իր բուն նպատակին մանավանդ հեռավար դասերի պարագայում:
- **Padlet**-ն առցանց գործիք է, առցանց գրատախտակի սահիկաշար, որը հանդիսանում է համագործակցային աշխատանքի տիրույթ:
- **Edpuzzle**-ը կիրառելի է որպես հեռավար դասընթացի կիրառման միջոց, այն հարթակ է, որտեղ կարելի է ներբեռնել վիդեոն և պատրաստել հարցաշար տվյալ նյութի շուրջ:
- **Wordwall** դասընթացը ավելի հետաքրքիր դարձնելու համար կարելի է այս գործիքով կազմել և կիրառել՝ հետաքրքրաշարժ, ինքնատիպ և անհատական առաջադրանքներ:
- **Socrative**-ը թեստեր ստեղծելու, որոնելու և տարածելու, ինչպես նաև թեստեր անցկացնելու գործիք է: Առավելություններից հարկ է նշել զարգացման հեշտությունը և հաճելի տեսքը:
- **Quizizz**-ը ուսանողների գնահատման հետաքրքրաշարժ, ինտերակտիվ առցանց գործիք է:
- **LearningApps**-ը լիովին անվճար առցանց ծառայություն է, որը թույլ է տալիս ստեղծել ինտերակտիվ վարժություններ՝ ստուգելու ձեր գիտելիքները:
- **Storyjumper**-ը առցանց ռեսուրս-գործիք է, որը կարելի է օգտագործել տարբեր եղանակներով: Այս հրաշք գործիքը հնարավորություն է տալիս ստեղծել պատմություններ, բառարաններ՝ գրքի տեսքով: Այն ուսուցման նոր հնարավորությունների անվճար ծառայություն է, որը գործում է վեբ ռեժիմով:

Ժամանակակից վեբ ծառայությունները մեծ հնարավորություններ են տալիս սովորողների համատեղ (հավաքական) աշխատանքի համար՝ ինչպես դպրոցում, այնպես էլ դպրոցի պատերից դուրս: Այս ծառայություններից մեկը Storyjuper-ն է, որը թույլ է տալիս ստեղծել արցանց գիրք՝ անհրաժեշտ գրառմամբ, նկարներով (լուսանկարներով), ձայնագրությամբ և դրանք կիսել:

Եզրակացություն

Ուսումնական գործընթացում S2S ներուժի օգտագործման շրջանակը բավականին լայն է: Այնուամենայնիվ, դպրոցական տարիքի երեխաների հետ աշխատելիս մենք պետք է հիշենք «Մի՛ վնասիր» պատվիրանը: S2S -ն իրենց աշխատանքում օգտագործող ուսուցիչները եկել են այն եզրակացության, որ տեղեկատվական տեխնոլոգիաները միայն փնտրողների համար են, այն ուսուցիչների համար են, ովքեր սիրում են սովորել նոր բաներ: Այսպիսով, մենք տեսնում ենք, որ դասարանում S2S կիրառմամբ կրթական գործընթացը միտված է տրամաբանական և քննադատական մտածողության, երևակայության և անկախության զարգացմանը: Եզրափակելով, ես ուզում եմ անել հետևյալ եզրակացությունը. Ուսուցիչը ներկայումս կարիք ունի սովորել օգտագործել համակարգչային տեխնոլոգիան, ճիշտ այնպես, ինչպես նա այսօր օգտագործում է գրիչ կամ կավիճ դասի վրա աշխատելու համար: Կարողանա ստեղծել սեփական տեղեկատվական տեխնոլոգիաներ և հմտորեն կիրառել ձեռք բերված գիտելիքները և հմտությունները՝ դասի մեթոդաբանությունը կատարելագործելու համար: Ուսուցիչի համար համակարգիչն այլևս շքեղություն չէ ,այլ՝ գործիք: Մարդը, ով տիրապետում է տեխնոլոգիային և տեղեկատվությանը, ունի այլ, նոր ոճ, կարող է այլ կերպ մոտենալ ծագած խնդրի գնահատմանը, դրանց կազմակերպմանը: Տեղեկատվական տեխնոլոգիաները Հայաստանում ժամանակակից դպրոցում պետք է դիտարկել որպես դասվանդման մեթոդներից մեկը: Այս մանկավարժական հետազոտությունը կշարունակվի իրականացվել փորձի արդեն նախանշված պլանի համաձայն:

Օգտագործված գրականության ցանկ

1. <https://nsportal.ru/nachalnaya-shkola/materialy-mo/2017/02/11/primenenieminformatsionnyh-tehnologiy-v-uchebnom-protse>
2. <https://www.imdproc.am/info/usucichnerin/thtn-usumnakan-gorcyntaxum>
3. <https://lib.armedu.am/files/resource/files/2022-0627/a02dd7f29ca161f255042619e3469101.pdf>
4. <https://dpir.mskh.am/hy/node/769>
5. Վ. Մանտուլենկո «Մեդիակրթությունը ժամանակակից աշխարհում»
6. Վ. Օսպեննիկովա «S2S կիրառումը դասավանդման մեջ»
7. Маршал Маклюэн, “Понимание медиа: внешние расширения человека”
Электронные образовательные ресурсы нового поколения: в вопросах и ответах. –
М.: Агентство «Социальный проект», 2007 Գ. Շ.